

Dissemination of environmental information

Executive summary and roadmap for the draft country maturity report: Armenia

Date: February 2019

From: PricewaterhouseCoopers

Legal notice



This project is funded by the European Union and is implemented by the European Environment Agency

European Environment Agency



The contents of this draft report were created by PricewaterhouseCoopers under EEA service contract No. 3437/R0-ENIE/EEA.57335 and do not necessarily reflect the official opinions of the European Commission or other institutions of the European Union. Neither the European Environment Agency nor any person or company acting on behalf of the Agency is responsible for the use that may be made of the information contained in this report.

1 Ամփոփ նկարագիր

Ներկայումս էլեկտրոնային կառավարման զարգացման համաշխարհային ինդեքսում (EGDI, 2018թ.) Հայաստանը զբաղեցնում է 87-րդ տեղը, իսկ բաց տվյալների պաշարների (ODIN) վարկանիշով (2017թ.)՝ 45-րդ տեղը: Վերջին 5 տարիների ընթացքում իրականացվել են բազմաթիվ նախաձեռնություններ, ինչպես, օրինակ՝ էլեկտրոնային կառավարման պորտալի և Սևանա լճի համար Շրջակա միջավայրի տեղեկատվական համակարգի ստեղծումը: Այնուամենայնիվ, երկրում դեռևս առկա է էլեկտրոնային կառավարման պորտալի և էլեկտրոնային ծառայության լրացուցիչ զարգացման, բաց տվյալների պորտալի հիմնման, ինչպես նաև շրջակա միջավայրի տեղեկատվության տարածման բարելավման անհրաժեշտություն՝ իրավական, կազմակերպական և տեխնոլոգիական մակարդակներում մի շարք միջոցառումների իրականացման միջոցով: ՏՀՏ վիճակագրության տվյալներով, Հայաստանում տնային համացանցից օգտվում են տնային տնտեսությունների շուրջ 86% -ը¹, ինչը ավելի բարձր ցուցանիշ է ԱԳ այլ երկրների համեմատ:

Ներկայումս երկրի համար կարևոր մարտահրավերներից մեկը էլեկտրոնային կառավարման և Բաց տվյալների նախաձեռնությունների խթանումը և բնապահպանական տեղեկատվության կրողների միջև համագործակցության բարելավումն է, ինչը թույլ կտա ձևավորել բնապահպանական տեղեկատվության փոխանակման և տարածման ավելի կատարելագործված մեխանիզմներ:

Էլեկտրոնային կառավարում

Հայաստանը հանդիսանում է Բաց կառավարման գործընկերության մասնակից: Այս համատեքստում երկրում իրականացվել են էլեկտրոնային կառավարման ոլորտի մի շարք նախաձեռնություններ, որոնք հիմնականում ուղղված են եղել թափանցիկության բարձրացմանը: Ընդհանուր առմամբ, 2016-2018 թթ. Ընթացքում երկիրը հասել է մեղմացված արդյունքների. 15 հանձնառությունների թվում² ամբողջությամբ ավարտվել է մեկ ծրագիր:

Այնուամենայնիվ, երկիրը մշակել է բավականին խոստումնալից և հեռանկարային թվային ռազմավարություն 2018-2030թթ. համար, որն այս պահին դեռևս չի ընդունվել Կառավարության կողմից: Ռազմավարության առաջնահերթություններից մեկը լինելու է որոշումների կայացման գործընթացում տվյալների լիակատար ներուժով օգտագործման ապահովումը: Այդ իմաստով Բաց Տվյալները գերակա թեմա է թվային օրակարգում: Այնուամենայնիվ, բնապահպանական տեղեկատվությունը ինտեգրված չէ թվային

¹ <https://www.itu.int/net4/itu-d/icteye/CountryProfileReport.aspx?countryID=17>

² https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_End-Term_Report_2016-2018_EN.pdf

օրակարգում, ինչը կարող է հանգեցնել բնապահպանական կառույցների և ոլորտային գերատեսչությունների նախաձեռնությունների կրկնօրինակման:

Ինչ վերաբերում է էլեկտրոնային ծառայություններին, Կառավարությունը մշակել է էլեկտրոնային կառավարման պորտալ (www.e-gov.am), որը նաև պարունակում է տեղեկություններ Կանոնակարգերի և այլ նախաձեռնությունների, մասնավորապես՝ էլեկտրոնային ստորագրության վերաբերյալ: Այսպիսով, Հայաստանը չունի հանրային ծառայության մետատվյալների ստանդարտի վրա հիմնված էլեկտրոնային ծառայության հատուկ պորտալ, ինչպես օրինակ՝ Եվրոպական հանրային ծառայության առանցքային բառապաշարը (European Core Public Service Vocabulary): Բացի այդ, Եվրամիության անդամ պետությունների համեմատ քիչ է նաև ծառայությունների տեսականին:

Ի վերջո, երկիրը նաև չունի տեղեկատվության փոխանակման և էլեկտրոնային ծառայությունների մատուցման փոխգործակցելիության չափանիշներ: Էլեկտրոնային կառավարության կրկնօրինակելի բլոկների ստեղծումը, ինչպես օրինակ՝ EU CEF (ԵՄ «Հաղորդակցություն Եվրոպայում») բլոկները³, կարող են նպաստել էլեկտրոնային ծառայությունների ներդրմանը: Երկրում չկա նաև բնապահպանական տվյալների աշխարհագրա-տարածական բազա:

Բաց տվյալներ

Հանրամատչելի տեղեկատվության մատչելիության քաղաքացիական իրավունքի վերաբերյալ հիմնական տեղական օրենսդրական ակտը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն է (ընդունվել է 2003 թ.): Գործող օրենսդրությունը համեմատաբար բարվոք է, սակայն այն պետք է հարմարեցվի «Բաց տվյալների» պորտալի հայեցակարգին, ինչպես նաև նախատեսվեն Բաց տվյալների կառավարման և գործադրման մեխանիզմներ: Այսպիսով, երկիրը չունի Բաց Տվյալների պորտալ և, որպես այդպիսին, կարելի է համարել, որ երկիրը «սկսնակ» կարգավիճակում է բաց տվյալների առումով: Հրապարակային տեղեկատվությունը տարածվում է հանրամատչելի կայքերում և սովորաբար չի հրապարակվում ավտոմատ կերպով ընթերցվող (այսինքն՝ pdf) ձևաչափով: Հանրամատչելի կայքերը նաև չեն տրամադրում հրապարակված հաշվետվությունների և տվյալների վերաբերյալ մետատվյալներ: Բացի այդ, Բաց Տվյալների պորտալի, ինչպես նաև Բաց Տվյալների ընտրության, հեռացման և հրապարակման հստակ ընթացակարգերի բացակայությունը արժեզրկում են հանրամատչելի տեղեկատվության հրապարակումը:

Բնապահպանական տեղեկատվություն

Հայաստանի 2014-2025թթ. Զարգացման ռազմավարությունը բնապահպանական խնդիրների համար չի սահմանել բարձր գերակայություն: Այնուամենայնիվ, 2001թ. «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիայի (Օրիուսի

³ <https://ec.europa.eu/cefdigital/wiki/display/CEFDIGITAL/About+CEF+building+blocks>

կոնվենցիա)⁴ վավերացումը և Արևելյան գործընկերության «Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության մասին համագործակցության հռչակագրի» ստորագրումը (ԱԱ) նպաստում է բնապահպանական տեղեկատվական համակարգի զարգացմանը: Այս նպատակներով Հայաստանը ստացել է միջազգային աջակցություն՝ գիտելիքների և նյութական ռեսուրսների առումով: Մասնավորապես, ԵԱՀԿ-ն ստանձնել է Օրիուսի կոնվենցիայի սկզբունքների համաձայն բնապահպանական տեղեկատվության մատչելիության հիմնական խթանող դերը՝ հանրապետությունում հիմնելով Օրիուս կենտրոնների ցանց և Պետական համալսարանում ստեղծելով Կայուն զարգացման կենտրոն: Պետք է նշել, որ ներկայումս երկրում համապատասխան կառույցների պակասը՝ ինչպես մարդկային ռեսուրսների, այնպես էլ տեխնիկական տեսանկյունից, խոչընդոտում են Օրիուսի կոնվենցիայի իրականացումը: Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը 2003 թ. մայիսի 21-ին ստորագրել է Օրիուսի կոնվենցիայի «Աղտոտիչների արտանետման և տեղափոխման մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ արձանագրությունը, որը սակայն դեռ չի վավերացվել: Հրապարակված բնապահպանական տեղեկատվության առնչությամբ, Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի մշակել «էկո-պորտալ», որը կապահովեր բնապահպանական բոլոր տեղեկությունների հասանելիություն: Ներկա պահին բնապահպանական տվյալները և հաշվետվությունները սփռված են տարբեր կայքերում և հաշվետվությունների որոնման համար առկա չեն մետատվյալների ստանդարտներ: Որակի վերաբերյալ ընթացակարգերը և արդյունքները չեն հրապարակվում, ինչը դժվարացնում է հրապարակված տեղեկությունների գնահատումը: Պորտալները նաև վատ են թարգմանված, և մեծ մասամբ համապատասխան տեղեկությունները հասանելի չեն անգլերենով: Այդ իմաստով, լավագույն օգտագործելի պորտալը վիճակագրական ծառայության կայքն է, որը հնարավորություն է տալիս ստանալ ՄԱԿ-ի ԵՏՀ ցուցանիշների վերաբերյալ համեմատելի տեղեկատվություն տարբեր ժամանակային կտրվածքներով: Բացի այդ, 2014 և 2015 թվականներին Շրջակա Միջավայրի Եվրոպական Գործակալության աջակցությամբ Հայաստանում մշակվել է Սևանա լճի համար Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգի (ՇՄՏՄՀ) ստեղծման փորձնական նախագիծ: Այս գործողությունը իրականացվել է «Եվրոպական հարևանության տարածաշրջանում Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգի (ՇՄՏՄՀ) սկզբունքների և փորձի իրականացում» (ԵՀԳ ՇՄՏՄՀ, 2010-2015) ծրագրի շրջանակներում: Փորձնական նախագծի նպատակն էր՝ մշակել տարբեր աղբյուրներից տվյալների ինտեգրման հնարավորություն ստեղծող մոդել/մեխանիզմ, որպես մեկ քայլ հիմնական գործընկերների միջև տվյալների կանոնավոր փոխանակման ուղղությամբ: Վերջապես, գերատեսչությունների միջև հանրամատչելի բնապահպանական տեղեկատվության փոխանակման մեխանիզմը պարզ չէ, թեև վիճակագրական ծառայության կայքում հասանելի են «Ձևեր»: Այսպիսով, պարզ չէ, թե արդյոք տեղեկատվության փոխանակման մեխանիզմը հնարավորություն է տալիս ապահովել որակյալ և ժամանակին բնապահպանական տեղեկատվություն: Այսպիսով, էլեկտրոնային

⁴ Ավելի ինչ, Հայաստանի Հանրապետությունը 2003 թ. մայիսի 21-ին ստորագրել է Օրիուսի կոնվենցիայի «Աղտոտիչների արտանետման և տեղափոխման մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ արձանագրությունը, որը սակայն դեռ չի վավերացվել:

ստորագրությամբ, առցանց ծառայությունների մատուցմամբ և բնապահպանական մետատվյալների ավտոմատ հավաքագրման հնարավորությամբ հագեցած մեկ միասնական բնապահպանական հարթակը էականորեն կբարելավեր բնապահպանական տեղեկատվության փոխանակման գործընթացը:

Հիմնական մարտահրավերները

Բնապահպանական տեղեկատվության ոլորտում Հայաստանի առջև կան մի շարք մարտահրավերներ:

Ներկա պահին Օրիուսի կոնվենցիայի և Բաց կառավարման գործընկերության շրջանակներում ստանձնած միջազգային հանձնառությունները, ցավոք, դժվար իրագործելի են: Մի կողմից, իրավական դաշտը չի նախատեսում դրանք իրականացնելու բոլոր մեխանիզմները, մյուս կողմից, ռեսուրսների, ընթացակարգերի, տեխնոլոգիաների և հմտությունների պակասը խոչընդոտում է դրանց կատարմանը:

Բնապահպանական տվյալների առնչությամբ, երկիրը պաշտոնապես չի սահմանել բնապահպանական ցուցանիշներ, թեև վիճակագրական ծառայությունը հրապարակում է ՄԱԿ-ի ԵՏՀ-ի ցուցանիշները: Բնապահպանական տվյալները և հաշվետվությունները սփռված են տարբեր կայքերում և հարթակներում, և դրանցից ոչ մեկը ամբողջական պատկերացում չի տալիս երկրում բնապահպանական իրավիճակի մասին: Բացի այդ, երկրում չի հիմնված բաց տվյալների պորտալ և, հետևաբար, չկա որևէ կանոնակարգ, կենտրոնացված պորտալում հանրամատչելի տեղեկատվության հրապարակումների կանոնակարգման և գործադրման համար:

Ավելին, հանրամատչելի տեղեկատվության և բնապահպանական տեղեկատվության մետատվյալների ստանդարտների բացակայությունը սահմանափակում է քաղաքացիների համար տեղեկատվության հասանելիությունը և համակարգերի փոխգործակցելիությունը: Երկրի համար նաև օգտակար կլինի ունենալ բնապահպանական տվյալների կենտրոնացված աշխարհագրա-տարածական պորտալ, որտեղ քաղաքացիները կարող են քարտեզի վրա իրական ժամանակով հետևել շրջակա միջավայրի վիճակին:

Գերատեսչությունների միջև բնապահպանական տեղեկատվության փոխանակումը նույնպես հստակ չէ, և չկա որևէ կենտրոնացված համակարգ, որը հնարավորություն կտար հավաքագրել, ինչպես նաև ապահով կերպով փոխանակել հասանելի բնապահպանական տվյալները: Բացի այդ, հանրամատչելի տեղեկատվության հարցումը իրենից ներկայացնում է բավականին աշխատատար գործընթաց, մինչդեռ տեխնոլոգիական լուծումը թույլ կտար ավտոմատ կերպով ստանալ պահանջվող տեղեկությունները՝ մինչույն ժամանակ նվազեցնելով գործառնական ծախսերը:

Միջազգային համագործակցությունը նույնպես մարտահրավերներ է պարունակում ֆինանսական և գործնական տեսանկյունից: Անշուշտ, երկրում առկա են այլ երկրների, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ամրապնդման մեխանիզմներ: Պետք է նշել, որ հանրային կայքերում նաև զետեղված է ոչ որակյալ թարգմանություն, իսկ հանրամատչելի տեղեկատվությունը (կամ մետատվյալները) որպես կանոն առհասարակ անգլերեն չեն հրապարակվում:

2 Ճանապարհային քարտեզ

Հայաստանի Հանրապետության համար սահմանվել են զարգացման ենթակա հետևյալ հիմնական ոլորտները:

2.1 Բովանդակություն

Միջոցառում	Առաջնահերթություն	Նկարագրություն
<p>Իրավական դաշտի վերանայում, որը թույլ է տալիս առցանց տարբերակով ապահովել ոչ գաղտնի հանրամատչելի տեղեկատվության հասանելիությունը և վերարտադրումը</p>	<p>Բարձր</p>	<p>Այս նախաձեռնությունն ուղղված է հանրամատչելի տեղեկատվության առնչվող իրավական դաշտի վերանայմանը, որը նպատակ ունի.</p> <ul style="list-style-type: none"> • սահմանել/վերանայել պահանջների և պատասխանատվության շրջանակը՝ ոչ գաղտնի հանրամատչելի տեղեկատվության հասանելիության և առցանց օգտագործման ընդլայնմանը նպաստելու համար • ներդաշնակեցնել բնապահպանական իրավական ակտերը • սահմանել ազգային վիճակագրական տվյալները հանրամատչելի տեղեկատվությունից տարբերակելու կանոնները, և սահմանել հստակ կանոններ բնապահպանական տեղեկատվության հաշվետվողականության առումով:
<p>Բաց տեղեկատվության ազգային ռազմավարության և գործողության ծրագրի մշակումը, որոշակի տեսակի տեղեկատվության առումով կիրառելու նպատակով</p>	<p>Բարձր</p>	<p>Պետք է մշակվի Բաց տվյալների ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր, որը համահունչ կլինի ազգային մակարդակով սահմանված ավելի լայնածավալ ռազմավարություններին: Այն պետք է ապահովի ազգային բաց տվյալների պորտալի շրջանակի սահմանում, կառավարումը և ֆինանսավորումը, ինչպես նաև բավարար ռեսուրսների հատկացումը բաց տվյալների վերաբերյալ ինչպես հրապարակողների, այնպես էլ պոտենցիալ օգտագործողների շրջանում իրազեկվածության մեծացման ուղղությամբ</p> <p>Ռազմավարությունը պետք է Բաց Տվյալները բաժանի «տվյալների կատեգորիաների» (օրինակ՝ շրջակա միջավայր, արդարություն, առողջապահություն և այլն)</p>

Implementation of the Shared Environmental Information System principles and practices in the Eastern Partnership countries (ENI SEIS II East)

		<p>Գործողությունների ծրագրով պետք է սահմանվեն յուրաքանչյուր կոնկրետ տվյալների կատեգորիայի համար առանցքային միջոցառումները, միևնույն ժամանակ ապահովելով փոխգործակցելիությունը: Մասնավորապես`</p> <ul style="list-style-type: none"> • հրապարակման ենթակա հանրամատչելի տեղեկատվության ընտրությունը և առաջնահերթությունների սահմանումը • Տեխնոլոգիական հարցեր. պորտալ, տեխնիկական ստանդարտներ, API-ներ • Կազմակերպչական հարցեր. դերերը և պարտականությունները, միջազգային համագործակցությունը և համապատասխանությունը միջազգային ստանդարտներին • Մշտադիտարկում. Ազդեցության գնահատում, բաց տվյալների մոնիտորինգ • Խթանման և ներգրավվածության հարցերը • Հմտությունների և կարողությունների զարգացում <p>Ընտրված միջոցառումները պետք է ներառեն բոլոր գերատեսչություններին, որոնք կազմից պետք է առաջադրվեն համապատասխան լիազորված ներկայացուցիչներ, ընդ որում, իրականացումը ապահովելու համար կառավարումը պետք է իրականացվի վարչապետի գրասենյակի կամ կառավարության մակարդակով:</p>
<p>Բնապահպանական տեղեկատվության բոլոր տեսակներ համար մետատվյալների նկարագրության ստանդարտի սահմանում</p>	<p>Բարձր</p>	<p>Այս նախաձեռնությունը նպատակ ունի սահմանելու բնապահպանական տվյալների և շրջակա միջավայրի վերաբերյալ հաշվետվությունների տարածման չափորոշիչները: Արդյունքում, գերատեսչություններ ավելի հեշտությամբ կփոխանակեն և կկառավարեն բնապահպանական տվյալները, միևնույն ժամանակ քաղաքացիների համար առավել դյուրին կդառնա տեղեկատվություն ստացումը:</p> <p>Որպես օրինակ կարող է լինել ԵՄ-ի DCAT-AP ստանդարտի ներդրումը, որը նաև</p>

Implementation of the Shared Environmental Information System principles and practices in the Eastern Partnership countries (ENI SEIS II East)

		<p>հնարավորություն կտա ինտեգրվել Եվրոպական տվյալների պորտալին:</p>
<p>Բնապահպանական տվյալների ժամանակին և պարբերաբար հավաքագրում և տարածում համաձայն Օրիուսի կոնվենցիայի, ԱՍՏ Արձանագրության (անհրաժեշտության դեպքում), ինչպես նաև Կոնվենցիայի և Արձանագրության Կողմերի նիստերի որոշումների և առաջարկությունների</p>	<p>Բարձր</p>	<p>Առանց բավարար և հուսալի բնապահպանական տվյալների առկայության, դրանց մատչելիության մասին խոսելն ավելորդ է: Հետևաբար, այս նախաձեռնությունը կնախատեսի բնապահպանական տվյալների հետ աշխատանքի վերից վար մոտեցում, որը կսահմանի տվյալների հավաքագրման և հաղորդման անհրաժեշտ կանոնավորությունը և մանրամասնությունը: Բացի այդ, այս նախաձեռնությունը կկարգավորի տարբեր քաղաքական գործընթացների համար բնապահպանական տեղեկատվության ժամանակին մատչելիության ապահովման մեխանիզմը:</p>
<p>Հանրամատչելի բնապահպանական տեղեկատվության էլեկտրոնային ռեեստրի ստեղծում</p>	<p>Բարձր</p>	<p>Այս նախաձեռնությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր հաստատությունում առկա և հրապարակելի բնապահպանական տեղեկատվության ռեեստրի ստեղծմանը (օրինակ՝ մետատվյալների կառավարման համակարգ)՝ սահմանված իրավական դաշտի համատեքստում: Այս նախաձեռնությունը կարող է զուգակցվել բնապահպանական տեղեկատվության մետատվյալների ստանդարտացման, ինչպես նաև «բնապահպանական տեղեկատվության» հասանելիության ստանդարտ կենտրոնների սահմանման գործողությունների հետ, ինչը հնարավորություն կընձեռի ավտոմատ հավաքել այդ տեղեկատվությունը ռեեստրի միջոցով:</p>
<p>Բնապահպանական տվյալների որակի վերահսկման մեխանիզմների մշակում և հրապարակում</p>	<p>Բարձր</p>	<p>Այս նախաձեռնությամբ՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Կգնահատվի շրջակա միջավայրի տվյալների հավաքման (մշտադիտարկման), տարածման (համախմբման, տեսակավորման, ընդլայնման) գծով առկա որակի վերահսկման մեխանիզմները: 2. Կապահովվի որակի վերահսկողության ստանդարտ միասնական մեխանիզմ և կսահմանվեն պարտադիր նվազագույն ստանդարտները

Implementation of the Shared Environmental Information System principles and practices in the Eastern Partnership countries (ENI SEIS II East)

		<p>3. Կձևավորվեն բնապահպանական տվյալների որակի վերահսկողության առումով տարբեր մակարդակներում պարտավորությունների սահմանման իրավական հիմքերը և պատասխանատվության միջոցները</p> <p>4. Կներդրվեն որակի վերահսկման մեխանիզմները և կհիմնվի բնապահպանական տվյալների գնահատման տարեկան հաշվետվողականության գործընթաց</p>
<p>Տվյալների հավաքագրման, հեռացման (օրինակ՝ սահմանափակ հասանելիության տվյալների հեռացման) գործընթացների նկարագրություն և հանրամատչելի տեղեկատվության հրապարակման նախապատրաստման մեթոդաբանության մշակում</p>	<p>Բարձր</p>	<p>Այս ծրագրով կսահմանվեն հրապարակման ենթակա հանրամատչելի տվյալների ամբողջությունից զաղտնի տվյալների անանունության ապահովման և հեռացման ընթացակարգեր, մեթոդներ և գործիքներ: Անհրաժեշտության դեպքում, այս նախաձեռնությունը նաև կնախատեսի իրավական ակտերի ներդաշնակեցում:</p>
<p>Հանրային ծառայությունների գույքագրում, վերաորակավորում և թողարկում որպես էլեկտրոնային ծառայություններ</p>	<p>Բարձր</p>	<p>Այս նախաձեռնությամբ՝</p> <ul style="list-style-type: none"> • կապահովվի պետական հիմնարկների կողմից մատուցվող բոլոր հանրային ծառայությունների գույքագրումը • կստանդարտացվեն հանրային ծառայությունների «ծառայողական անձնագրերը» (այսինքն, մետատվյալների նկարագրությունը), օրինակ, օգտագործելով ԵՄ Հիմնական Հանրային Ծառայությունների բառապաշարը⁵ • կգնահատվի յուրաքանչյուր ծառայության արդյունավետությունը • կգնահատվեն և կառաջարկվեն վերամշակման միջոցառումներ • ընտրված հանրային ծառայությունները կհրապարակվեն և հասանելի կդառնան առցանց տարբերակով <p>Նշում. Նման նախաձեռնություն իրականացվում է Մոլդովայի Հանրապետությունում և կարող է կրկնօրինակվել երկրում:</p>

⁵ <https://joinup.ec.europa.eu/solution/core-public-service-vocabulary>

Implementation of the Shared Environmental Information System principles and practices in the Eastern Partnership countries (ENI SEIS II East)

<p>Վիճակագրական բնապահպանական ցուցանիշների ծածկույթի ընդլայնում</p>	<p>Բարձր</p>	<p>Այս նախաձեռնությամբ՝</p> <ul style="list-style-type: none"> կընդլայնվեն (և պաշտոնապես կհաստատվեն, եթե կիրառելի է) Ազգային վիճակագրական ծառայության կայքում հրապարակված ազգային բնապահպանական առկա ցուցանիշների ցանկերը կվերլուծվեն և կմշակվեն այդ ցուցանիշների հավաքման և հրապարակմանն օժանդակող անհրաժեշտ տեխնոլոգիական, կազմակերպչական և իրավական մեխանիզմները
<p>Հրապարակված տվյալների փոխարկում ավտոմատ ընթեռնելի ձևաչափով</p>	<p>Բարձր</p>	<p>Բնապահպանական տվյալների իրական ներուժը դրանց օգտագործելիության մեջ է: Այսպիսով, այս նախաձեռնությունը առաջին փուլում կգնահատի հրապարակված բնապահպանական տվյալները և դրանց ձևաչափը: Ավտոմատացված ընթեռնելի ձևաչափի չունեցող տվյալների համար որպես գերակայություն կսահմանվի դրանց փոխարկումը ավտոմատ ընթեռնելի ձևաչափի: Երկրորդ փուլում գերատեսչություններում կներդրվեն տվյալների ավտոմատ ընթեռնելի ձևաչափի փոխարկման գործընթացներ, գործիքներ և ռեսուրսներ:</p>
<p>Պետական մարմինների միջև տվյալների կառավարման գործառույթների առնչությամբ սահմանված իրավական պարտավորությունների ներդաշնակեցում</p>	<p>Բարձր</p>	<p>Այս նախաձեռնությամբ կգնահատվի բնապահպանական տեղեկատվության մշտադիտարկման, կառավարման և տարածման մեջ ներգրավված բոլոր անձանց լիազորությունների շրջանակը: Այս գնահատումը կհստակեցնի բացթողումները և տարբեր գերատեսչություններում պարտականությունների կրկնությունները: Այս հիմունքներով, նախաձեռնության շրջանակներում պարտականությունների պատշաճ բաշխում ապահովելու համար կներկայացվի պաշտոնեական հրահանգների տեքստերի վերանայման առաջարկություն:</p>
<p>Բնապահպանական տեղեկատվության համար միասնական և օգտագործման նպատակով հարմար առցանց հասանելիության տիրույթի հիմնում, դրա գործառութային նշանակության և արտաքին դիզայնի վերաբերյալ</p>	<p>Բարձր</p>	<p>Այս նախաձեռնությամբ կդիտարկվի բնապահպանական հաշվետվողականության հստակ դերերի (պատասխանատվությունների) ձևավորման /նշանակման իրավական դաշտը: Նաև կներդաշնակեցվեն և կձևակերպվեն բոլոր հաստատությունների միջև</p>

Implementation of the Shared Environmental Information System principles and practices in the Eastern Partnership countries (ENI SEIS II East)

<p>որոշումը կայացնելով հասարակական քննարկումների միջոցով (տես Օրհուսի կոնվենցիայի Կոդների VI / 1 որոշում):</p>		<p>տեղեկատվության փոխանակման գործառույթները, որոնք հանրամատչելի կդարձվեն՝ բնապահպանական տեղեկատվության փոխանակման ու տարածման գործընթացի խթանման նպատակով:</p>
<p>Փոխգործակցելիության համակարգի հիմնում բնապահպանական տեղեկատվության փոխանակման ընթացակարգերի ստանդարտացման համար:</p>	<p>Միջին</p>	<p>Պետք է ստեղծվեն պետական մարմինների միջև տվյալների փոխանակման ստանդարտ ընթացակարգեր և ձևաչափեր: Հնարավորության դեպքում, պետք է ներդրվի ուղղակի API՝ ապահովելու տվյալների ժամանակին հասանելիությունը և թարմացումը:</p>
<p>Աշխարհագրա-տարածական և բնապահպանական տեղեկատվական համակարգերի փոխգործակցելիության բարելավում</p>	<p>Միջին</p>	<p>Ներկայումս տարբեր բնապահպանական պորտալներ օգտագործում են աշխարհագրա-տարածական տվյալներ: Այս նախաձեռնությամբ՝</p> <ul style="list-style-type: none"> • կիրականացվի բոլոր աշխարհագրա-տարածական պորտալների, ներառյալ դրանց ստանդարտների և տեխնոլոգիական կատարման համապարփակ վերանայում • կմշակվեն բնապահպանական աշխարհագրա-տարածական պորտալների նախագծման ստանդարտներ • կապահովվի ժամանակի և տարածության մեջ համախմբված բնապահպանական տվյալների կենտրոնացված դիտակետ
<p>Առկա բնապահպանական տվյալների և տեղեկատվության մատչելիության և օգտագործման բարելավում՝ բազմալեզու հասանելիության ապահովման միջոցով</p>	<p>Միջին</p>	<p>Այս նախաձեռնության շրջանակներում կապահովվի պետական հաստատությունների կայքերի, տարեկան հաշվետվությունների և բնապահպանական մետատվյալների ամբողջական թարգմանություն անգլերեն/ռուսերեն լեզուներով:</p>
<p>Բաց տվյալների պորտալի միջոցով հանրամատչելի տեղեկատվության տարածման խթանում</p>	<p>Ցածր</p>	<p>Կբացահայտվեն հիմնական տվյալների կրողները և կպարզվեն տվյալների հրապարակման հետ կապված հիմնական խնդիրները և խոչընդոտները:</p> <p>Կկատարվեն այդ խոչընդոտները վերացնելուն և տվյալների հրապարակման խթանմանն ուղղված առաջին քայլերը: Կօգտագործվեն այլ երկրներում (օրինակ, ԱԳ</p>

Implementation of the Shared Environmental Information System principles and practices in the Eastern Partnership countries (ENI SEIS II East)

		և/կամ ԵՄ) արդեն իսկ պատրաստի մշակված նյութերը: Կկազմակերպվեն աշխատաժողովներ և իրազեկման մեծացմանն ուղղված դասընթացներ հիմնական տվյալների կրողների համար: ⁶
Բաց տվյալների ազդեցության վերլուծության համակարգերի մշակում	Ցածր	Այս նախաձեռնությամբ կմշակվի բաց տվյալների սոցիալական, քաղաքական, բնապահպանական և տնտեսական ազդեցության գնահատման համակարգ: Այն մշակված կլինի բնապահպանական տվյալների ներառման համար անհրաժեշտ ձևաչափով:
Հանրային իրազեկման բարելավման քաղաքականության իրագործում	Ցածր	Բարձրացնել հանրության իրազեկվածությունը բնապահպանական տեղեկատվության, դրա մատչելիության և հարակից խնդիրների վերաբերյալ:
Աշխատակիցների վերապատրաստում՝ սպասարկման համապատասխան մակարդակի ապահովման համար	Ցածր	Մետատվյալների, տվյալների որակի, գործիքների և ընթացակարգերի վերաբերյալ դասընթացների և առցանց նյութերի տրամադրում:
Բաց տվյալների տնտեսական, սոցիալական և բնապահպանական ազդեցությունների գնահատում	Ցածր	Այս նախաձեռնությունը նպատակաուղղված է պարզելու բաց տվյալների ազդեցությունը երկրում, ըստ «Բաց տվյալների ազդեցության վերլուծության համակարգի» և առաջարկելու կոնկրետ միջոցառումներ այն բարելավելու ուղղությամբ: Մասնավորապես, կարևոր է գնահատել բաց տվյալների նախաձեռնությունների ազդեցությունը քաղաքացիների և տարբեր տնտեսվարող սուբյեկտների կողմից շրջակա միջավայրի պահպանության ընկալման վրա:
Բնապահպանական տվյալների արտոնագրման պայմանների ներդաշնակեցում՝ դրանց օգտագործմանը և վերարտադրմանը նպաստելու համար	Ցածր	Այս նախաձեռնությամբ կմշակվի Բաց տվյալների, ներառյալ բնապահպանական տվյալների արտոնագիր:
Բնապահպանական, աշխարհագրա-տարածական,	Ցածր	Այս նախաձեռնությամբ կստեղծվեն բնապահպանական տեղեկատվության և

⁶ https://www.europeandataportal.eu/sites/default/files/edp_landscaping_insight_report_n4_2018.pdf

Implementation of the Shared Environmental Information System principles and practices in the Eastern Partnership countries (ENI SEIS II East)

<p>վիճակագրական, առողջապահական և այլ համապատասխան տեղեկատվության և բաց տվյալների մշակման մեթոդների, գործիքների, ընթացակարգերի և ստանդարտներ պարզեցում և ներդաշնակեցում</p>		<p>բաց տվյալների մշակման մեթոդներ, գործիքներ, ընթացակարգեր և ստանդարտներ տարբեր համապատասխան գերատեսչությունների համար:</p>
<p>Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների շրջանում բաց կառավարման և բաց տվյալների վերաբերյալ իրազեկվածության մեծացում</p>	<p>Շարունակական</p>	<p>Իրազեկման բարձրացման և կարողությունների զարգացման միջոցով կառավարման տվյալների պահանջարկի մեծացում: Էլեկտրոնային կառավարության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար, ՏՀՏ-ի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացումը և տեղեկատվության մատչելիության նկատմամբ հասարակության հետաքրքրությունը էլեկտրոնային կառավարման արդյունավետության առումով ունեն շատ մեծ նշանակություն:</p>
<p>Էլեկտրոնային ծառայությունների վերաբերյալ իրազեկվածության մեծացում</p>	<p>Շարունակական</p>	<p>Էլեկտրոնային ծառայությունների վերաբերյալ քարոզարշավների, աշխատաժողովների, շնորհանդեսների կազմակերպում և դրանց օգտագործման եղանակները լուսաբանող անվճար ուղեցույցների տրամադրում քաղաքացիներին: Կարևոր է, որպեսզի բնակչությունը ավելի ու ավելի շատ օգտվի էլեկտրոնային ծառայություններից:</p>

2.2 Ենթակառուցվածքներ

Միջոցառում	Առաջնահերթություն	Նկարագրություն
<p>Բաց տվյալների պորտալի մշակում</p>	<p>Բարձր</p>	<p>Այս նախաձեռնությամբ՝</p> <ul style="list-style-type: none"> • կսահմանվեն բաց տվյալների պորտալի տեխնիկական պահանջները, հաշվի առնելով աշխարհագրա-տարածական և բնապահպանական տվյալների ներառման հնարավորությունը • կսահմանվեն հանրամատչելի տեղեկատվության հրապարակման ընթացակարգերը և մեթոդները • Կմշակվեն բաց տվյալների վերարտադրման արտոնագրեր • Կապահովվեն պորտալի պարբերական թարմացումները և կայունությունը • Կներդրվի պորտալը • Կվերապատրաստեն պորտալի կառավարիչները և բովանդակության պատասխանատուները և (կամ) բաց տվյալների պատասխանատուները (կամ տվյալների կրողները): • Կբարձրացվի քաղաքացիների և գործարարների իրազեկվածությունը պորտալից տեղեկատվության վերարտադրության վերաբերյալ
<p>Համաձայն Օրհուսի կոնվենցիայի, ԱԱՏ Արձանագրության, ինչպես նաև Օրհուսի կոնվենցիայի, ԱԱՏ Արձանագրության Կողմերի նիստերի որոշումների և առաջարկությունների հիման վրա հիմնել բնապահպանական տեղեկատվության, ներառյալ՝ ԱԱՏ և այլ տեսակի բնապահպանական տվյալների կառավարման կենտրոնական համակարգ:</p>	<p>Բարձր</p>	<p>Բնապահպանական կառավարման միասնական համակարգի մշակում, որը կապահովի շրջակա միջավայրի որակի կամ երկարատև կանխատեսումների վերաբերյալ տվյալների կառավարումը: Այդ նպատակով, այս նախաձեռնությամբ.</p> <ul style="list-style-type: none"> • Կկատարվի բնապահպանական տեղեկատվության կառավարման համար օգտագործվող բոլոր համակարգերի գույքագրում • Կսահմանվեն բնապահպանական տեղեկատվության կառավարման կենտրոնական համակարգի պահանջները • Կներդրվի համակարգը • Օգտվողները և գերատեսչությունները կստանան վերապատրաստում համակարգից օգտվելու վերաբերյալ <p>Մասնավորապես, այս նախաձեռնությամբ կնախատեսվի տարբեր բնապահպանական</p>

Implementation of the Shared Environmental Information System principles and practices in the Eastern Partnership countries (ENI SEIS II East)

		<p>գործոնների ինտեգրման արդյունավետ համակարգի մշակում:</p> <p>Նշում. 1) համակարգը պետք է ապահովի ստանդարտ API- ի և տվյալների ձեռքով մուտքագրման/բեռնման հնարավորությունը, որպեսզի պահպանվի ժառանգականությունը և արտաքին համակարգերի հետ համատեղելիությունը և 2) այս նախաձեռնությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով, որ Հայաստանը դեռևս չի վավերացրել ԱԱՏ Արձանագրությունը:</p>
<p>Բնապահպանական համակարգերի փոխգործակցելիության ստանդարտների մշակում և միջգերատեսչական տվյալների հոսքի փոխանակման / տարածման, դրա ձևաչափի վերաբերյալ չափորոշիչների սահմանում, և հավաքագրված տվյալների կառավարման բարելավում</p>	<p>Միջին</p>	<p>Բնապահպանական տեղեկատվության մշտադիտարկման կենտրոնացված պորտալի մշակման արդյունքում այս նախաձեռնությամբ կստանդարտացվի բնապահպանական տեղեկատվության փոխանակման գործընթացը: Դրա հիման վրա գերատեսչությունները պարտավոր կլինեն իրենց համակարգերը հարմարեցնել ստանդարտներին և անցում կատարել կենտրոնական տեղեկատվական համակարգի հետ բնապահպանական տվյալների ավտոմատ փոխանակման:</p>
<p>Էլեկտրոնային ծառայությունների զարգացում</p>	<p>Միջին</p>	<p>Էլեկտրոնային կառավարման պորտալի կայացման հետագա բարելավման համար առաջարկվում է բարձրացնել հրապարակվող ծառայությունների ծավալը, ինչպես նաև ստանդարտացնել դրանց փաստաթղթերը: հանրային ծառայությունների նկարագրության բնորոշ ստանդարտներ են հանդիսանում EU CPSV չափանիշները (ԵՄ հիմնական հանրային ծառայությունների բառապաշար):</p>
<p>Բաց տվյալների պորտալի շարունակական սպասարկում</p>	<p>Միջին</p>	<p>Պորտալի օգտագործելիությունը կարող է բարելավվել, արտացոլելով լավագույն փորձը և այն համեմատելով գոյություն ունեցող ենթակառուցվածքներին: Այն պետք է ունենա լավ գործող որոնում, նորություններ և բլոգի բաժին՝ համապատասխան զարգացումների հանրայնացման, ինչպես նաև բաց տվյալների վերարտադրման օրինակների ներկայացման, հետադարձ կապի ուղիների մշակման համար:</p>
<p>Տեխնոլոգիական միջոցների օգնությամբ քաղաքացիների</p>	<p>Միջին</p>	<p>Այս նախաձեռնության շրջանակներում նպատակ է դրվում մի շարք հավելվածներ և / կամ «բնապահպանական տվյալների էկոհամակարգ»,</p>

Implementation of the Shared Environmental Information System principles and practices in the Eastern Partnership countries (ENI SEIS II East)

<p>ներգրավում շրջակա միջավայրի պահպանության գործընթացներին</p>		<p>որը հնարավորություն կտա քաղաքացիներին օգտվել և հետևել բնապահպանական տվյալներին:</p> <p>Օրինակ, հավելվածների միջոցով.</p> <ul style="list-style-type: none"> • հետևել բնապահպանական տեղեկատվությանը իրական ժամանակի ռեժիմում, ըստ իր գտնվելու վայրի • քաղաքացիները կարող են ահազանգել որսագողության դեպքերի մասին, նշել աղտոտված տարածքները և այլն: • քաղաքացիները կարող են մասնակցել իրենց շրջանում տեղի ունեցող շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարին ուղղված բնապահպանական միջոցառումներին
<p>Բոլոր բնապահպանական տվյալների համար կենտրոնացված աշխարհագրա-տարածական պորտալի հիմնում</p>	<p>Ցածր</p>	<p>Այս պահին մի քանի պորտալներ ապահովում են բնապահպանական տվյալների դիտում աշխարհագրա-տարածական տվյալների միջոցով: Այնուամենայնիվ, պաշտոնական աշխարհագրա-տարածական պորտալը դեռևս չի ապահովում բնապահպանական տվյալների հասանելիություն: Հետևաբար, անհրաժեշտ է ինտեգրել բնապահպանական բոլոր տվյալները մեկ միասնական աշխարհագրա-տարածական պորտալում:</p>

2.3 Միջգերատեսչական համագործակցություն (ցանց)

Միջոցառում	Առաջնահերթությունը	Նկարագրություն
ՄԱԿ-ի ԵՏՀ ցուցանիշների իրականացման և վիճակագրական համակարգի ներդրման միջոցով գիտելիքների և փորձի փոխանակում	Բարձր	<p>Այս նախաձեռնությունը կնախատեսի մի շարք միջոցառումներ, որոնք կներկայացնեն երկրի փորձը և կենտրոնական վիճակագրական համակարգում ՄԱԿ ԵՏՀ-ի ցուցանիշների իրագործման առաջատար փորձը: Փորձի փոխանակում տեղի կունենա հետևյալ ուղղություններով՝</p> <ul style="list-style-type: none"> • Իրավական • Կազմակերպական • Տեխնոլոգիաներ և ստանդարտներ • Մեթոդներ և գործիքներ
Բաց տեղեկատվության հայեցակարգի իրականացման համար միջգերատեսչական համակարգի հիմնում	Բարձր	<p>Այս նախաձեռնությունը կուժեղացնի (և անհրաժեշտության դեպքում կսահմանի) ազգային և միջազգային մակարդակով բաց տվյալների կառավարման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ հիմքերը:</p> <p>Այս նախաձեռնությունը շեշտը դնելու է հանրամատչելի տեղեկատվության հրապարակման ապահովման համար գերատեսչությունների միջև կայուն համագործակցության անհրաժեշտության վրա:</p>
Բնապահպանական տվյալների փոխանակման գործառույթների վերանայում, ստանդարտացում, ձևակերպում և հրապարակում	Միջին	<p>Այս նախաձեռնությունը մանրամասն կանդրադառնա առկա բնապահպանական տվյալների փոխանակման գործառույթներին, կմշակվեն ստանդարտ փոխանակման գործառույթներ (օրինակ, նվազագույն պահանջներ, նմուշներ), կկատարվի իրավական ակտերի ներդաշնակեցում (օրինակ՝ կմշակվի օրենք «Բնապահպանական տվյալների փոխանակման գործառույթների մասին»), կխմբագրվեն/կթարմացվեն, որից հետո կհրապարակվեն փոխանակման գործառույթները:</p>
Ներկայումս բնապահպանական և բաց տվյալների խնդիրներին վերաբերող գործառույթներ իրականացնող կառույցների իրական	Միջին	<p>Այս նախաձեռնության շրջանակներում կգնահատվեն բնապահպանական տեղեկատվության հետ աշխատելու առումով առկա կարողությունները: Այն կանդրադառնա նաև մեթոդներին, ընթացակարգերին, լիազորություններին, գործիքներին և տեխնիկական հագեցվածությանը, հմտություններին և ռեսուրսներին: Յուրաքանչյուր գերատեսչության համար</p>

Implementation of the Shared Environmental Information System principles and practices in the Eastern Partnership countries (ENI SEIS II East)

<p>հնարավորությունների գնահատում</p>		<p>կներկայացվի գործողությունների ծրագիր, որը կհամեմատվի այլ ծրագրերի հետ՝ համակարգվածության և փոխադարձ կատարելագործման ապահովման նպատակով:</p>
<p>Վերապատրաստումների իրականացում Տվյալների սեփականատերերի համար տեղեկատվության բացահայտման ժամանակակից ստանդարտների և պահանջների վերաբերյալ</p>	<p>Ցածր</p>	<p>Այս նախաձեռնությունը կապահովի շարունակականությունը և տվյալների կրողների իրազեկվածությունը նոր ստանդարտների և պահանջների, ինչպես նաև տեղեկատվության բացահայտման ընթացքում դրանց կիրառման մասին</p>
<p>ՀԿ-ների զարգացման համար պայմանների ապահովում և նրանց հետ շարունակական համագործակցություն հաստատում</p>	<p>Ցածր</p>	<p>Այս նախաձեռնությունը կնպաստի ՀԿ-ների հետ համագործակցությանը.</p> <ul style="list-style-type: none"> • կբարելավվեն ֆինանսավորման մեխանիզմները • կմշակվեն պետական -մասնավոր գործընկերության նախաձեռնություններ • կմշակվեն նախաձեռնություններ բնապահպանական հասարակական կազմակերպությունների և ազգային մարմինների միջև հաղորդակցության բարելավման նպատակով • Կապահովվեն ՀԿ-ների միջև իրենց աշխատանքում բնապահպանական տեղեկատվության փոխանակման միջոցներ